'ի վերայ նորա սեննակ Լուսարարի, այլ Հայք ընդդէմ կացեալ ետուն քակել և խափանել զայն ('ի 13 Դեկտեմբերի)։ Անկարելի եղեւ բառնալ զատելութիւնս Յունաց որ և իցէ եղանակաւ, քանզի բանալի արտաքին դրան եկեղեցւոյն Բեթղեհէմի գոլով 'ի ձեռս նոցա, ըստ ախորժելոյ իւրեանց բանային և փակէին, և 'ի գալստեան ուխտաւորացն Հայոց հասուցանէին նոցա զպէսպէս նեղութիւնս և հանէին աղմուկս։ Իսկ փոխանորդ Աթոռոյն Երուսաղէմի Զաքարիա Եպիսկոպոս գրեաց գիր աղաչանաց առ Փոխարքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի, եւ խնդրեաց 'ի նմանէ ըստ իրաւանց բաժանորդութեան, որ լեալ էր կայսերական հրովարտակաւ, տացի եւ մի բանալի դրան այնորիկ ազգին Հայոց. թէպէտ գրեաց նա առ Դատաւորն Երուսաղէմի քննել զիրսն, եթէ ստոյգ իցէ բաժանորդութիւնն Հայոց տեղւոյն այնորիկ՝ տացի և մի բանալի եւս նոցա, բայց այս հրաման նորին ոչ գործադրեցաւ, ١٢٤٩։

Հայք առին հրաման 'ի Փոխարքայէն Եգիպտոսի սակս ծեփելոյ զեկեղեցին Ս. Յակոբայ և շինելոյ զՎերնատունն կանանց. թէպէտեւ լռեալ էին յայնժամ այլազգիք Երուսաղէմի և չհամարձակէին պահանջել ինչ, այլ 'ի զգուշութիւն ապագայ ժամանակի, խնդրեցին նաեւ հրովարտակ յԱրքայէ։ Եւ Զաքարիա Եպիսկոպոս որ վերատեսուչն էր շինուածոց ('ի 1 Մայիսի) սկիզբն արար քակել զորմն եկեղեցւոյն և բառնալ զմէջ կամարաց. ելին յորմոյ անտի մեծամեծ խաչքարք հայկական գրով, է՛ որ կանգուն և կէս բարձրութեամբ՝ և է՛ որ կիսով չափ նոցին, և 'ի կեդրոնի իւրաքանչիւրոց մնեալ հաստ բեւեռ պղնձեայ, 'ի նշան հին սովորութեան ազգին, որոց թուականն ոմանց 600 և ոմանց 602 թուին Հայոց։

Կիրակոս Եպիսկոպոս առաքեցաւ 'ի Յոպպէ ('ի 20 Յունիսի) որոշել զտեղի քառասնօրեայ զգուշութեան (քարանթին) 'ի պէտս ուխտաւորաց, որոշեցաւ տեղին պարտէզն Սեղբոս Ամիրայի, զոր կտակեալ էր Աթոռոյն, և հրամանաւ Փոխարքային Եգիպտոսի շինեցաւ տեղին ծախիւք Ս. Աթոռոյն (1835)։ Շինեալ աւարտեցաւ վերնատունն մեծամեծ պատուհանօք եւ 2 պատարագամատոյց սեղանաւ 'ի վերայ գաւթի մեծի տաճարին Ս. Յակոբայ, ծեփեալ